

Յ Ա Ի Ա Լ Ո Ի Ա Ծ



1.

Ձեռ. Էջմ. N 469|427 296ա

ԳԱՆՁ ԱՄԵՆԱՓՐԿՉԻՆ Ի ՏՐ ՄԱՆՈՒԷԼ ԲՁՆ.

**Մ**եծ զաւրութի մեծի նըշանին մեր փըրկագործին :  
 Ամենափըրկչին սք կերպարանին, ճոխ ճոխ քանդակին .  
 Ահեղ տեսակին, որ զնամանութի ի խաչ բարձողին . բերէ ի յանձին ,  
 Տարածմամբ բշկին, խոնարհմամբ զըլիսին . խըփմամբ աչերին :  
 Յաջ կողմն Յովսեփին, ձախ Նիկողիմին, իջուցողք մարմնին :  
 Աջ հաւր եւ հողին, վերուստ երեւին, գրոշմամբ ահագին :  
 Զոր հայցմամբ կուսին, կոփեալ գրոշմեցին . ձեռք սըրբազանին :  
 Սք աշակերտին Որոտման որդին՝ լանջօք փարողին :  
 Յաղագքս ծնողին, կարաւտեալ սըրտին, զորդին ի խաչին :  
 Ձեռամբ սիրելոյն՝ այս հրաշագործին՝ յորդոյ միածնին :  
 Որպէս ի նախկին, ձեռն Մովսեփին տախտակ կըտակին :  
 Ահա աւգնեա Ամենափըրկիչ յուսացելոցս ի քեզ կեցուցիչ : Ազ .

296բ

**Ա**րդ մեկնաբանեալ, տամ ձեզ ճանաչել զտիպն այս հրաշացեալ :  
 Յաւուրն այն վրիժեալ, որ զտին ըմբընեալ, ի խաչ բեւեռեալ :  
 Աշակերտին ընտրեալ, լըրմամբ ահի լեալ, բոլոր փախուցեալ :  
 Յոհաննես ընտրեալ, բազմաց ծանաւթ լեալ, նա ոչ երկուցեալ :  
 Այլ անգրէն մնացեալ եւ սպասորեալ կուսին սըրբաանեալ :  
 Իսկ կոյսն սըրտմեալ | հրէիցն յահի լեալ, ի թաքուստ կացեալ :  
 Սըրտիւ փափաքեալ, լերդիւ ցամաքեալ՝ զորդին կարօտեալ :  
 Յոհանէս երթեալ, զկիպարին առեալ՝ ի խաչէն մնացեալ :  
 Հրաշալի կոփեալ, դէմ խաչին կացեալ, արտասուօք հայցեալ :  
 Տուր տի՛ ընծաեալ՝ մաւր քո կարաւտեալ զտիպ անձագրեալ :  
 Տի՛ հրաշագործեալ, կոյսն յորժամ տեսեալ, յոյժ խանդաղատեալ :  
 Եւ զըրկապատեալ, զերեսօքն ածեալ, արտասուօք թացեալ :  
 Եւ զայս ասացեալ . սա է ստուգագրեալ, որդին իմ խաչեալ :  
 Փըրկիչ անւանեալ . Ահա աւգնեա :

**Մ**որ նորոգողին, նորակերտողին, նոր կերպ ահագին :  
 Ով տախտակ բանին, եւ տիպ արարչին, հիւսմամբ սք խաչին :  
 Նըման ըստառաջին տախտակաց կտակին, որ ի Սինաին :  
 Յայն օրէնս հին, դու ի նորըս կրկին մեզ պատուաստութի (s!) :  
 Զքեզ նորոցս յետին, ձեռն աշակերտին ի Գողգոթաին .  
 Զայն ձեռք Մովսեփին կոփեալ գործեցին զքեզ Բաներգեսին :  
 Զայն ի զուարճութի Մարիամ նախկին, քեռ Ահարոնին :  
 Իսկ դու բերկրութի փափաքեալ սըրտին Մարիամ կուսին :  
 Որպէս տիպ վերջին կուսական ծնողին ի յօր վախճանին :